Էջմիածին և ասաց. «Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ Հայոց և հովիւ վարատեալ հօտին սուրբ Գրիգորի։ Ահա՛ քեզ ժամ և ժամանակ, երթ վճարեա՛ զպարտս քո։

Խոնարհելով առաջի երկնից Հօր կամայ և մեծարելով զհամազգային միաձայն ընտրութիւնն, ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նուիրական պարտս իմ, զոր ունիմ առ Եկեղեցին Հայաստանեայց և առ ժողովուրդ Հայոց և գիտէք թէ քանի՞ շատ բազմապիսի և բազմապատիկ են չափ և կշիռ պարտուցս։

Այլ ես մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ զեօթանասուն ամն, մինչ ձեռս ի վեր կալեալ այլքն ածեն ինձ գօտի, թէ կարացից վճարել զայնչափ պարտս գոնէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ աւանդեալ է Տէրն և պահանջէ շահագործել տոկոսիւք և պարգերես կալ առաջի Պահանջողին։

Մինչ խոկամ զարհուրիմ ես, ո՛վ Եկեղեցի Հայաստանեայց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սփռեալ կաս ասարագրեալ ի հայրենի քո տանէն, չը գիտեմ թէ ո՞րպէս կարեմ վարել զհովուական տեսչութիւն իմ։ Մթթէ նստեալ յԱյրարատ մինչ ի Հնդիկս և յԵւրոպ և այլ հեռավայրս զօրեմ տեսանել զՁեզ։ Եւ զի՞արդ հնար է ինձ արածել զհօտն սեփական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես աչաց իմոց և ուր չկարեն հասանել ոտք այցելութեան իմոյ։

Այո՛, առաքեցայ ես ի լեռնէն Զիթենեաց, այլ չեմ ազատ առաքեալ, շրջել ոչ ի հնթանոսս, այլ յամենայն եկեղեցիս Հայոց, կենդանի բարբառով քարոզել և ուսուցանել, աչօք իսկ տեսանել զցաւս հօտին իմոյ և հոգալ զդարմանն։ Այլ զի՞նչ իցէ մարդոյն դարմանն։ Իցէ՞ թէ գթած Սամարացին անցանէր զքեզ։

Ուստի մնայ ինձ միայն, որ ըստ նախնի սովորութեան հօտասէր հովուաց՝ Ընդհանրական գրով և թղթով խօսել ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչեւ մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ հոգւով, ուր հոգիք մեր նախնի սուրբք Հարց կան և աղօթեն վասն ձեր։

Այլ ունիմ ես աչս որ մօտ են և տեսանեն զՁեզ. նոքա են իմ ընտրելակից եղբարք, Հովիւք և Առաջնորդք իւրաքանչիւր վիճակաց, որոց յանձնեալ է ոչ յինէն, այլ Քրիստոսէն, հովուել և